ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"8" նոյեմբերի 2012թ

№ 156 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 18 «Ն» որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի պահանջներով, **ո ր ո շ ու մ եմ.**

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի հետևյալ կազմը.

Թունյան Սուրեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Պողոսյան Ղուկաս	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ
Ղազարյան Ռաֆիկ	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ
Հայրապետյան Մելանյա	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Մարտիրոսյան Էդգար	ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի դասախոս
Բաղալյան Լարիսա	<<Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ դասախոս

2. Ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակել Սուրեն Թունյանին:
3. Ատեստավորման հանձնաժողովի քարտուղար նշանակել Ռաֆիկ Ղազարյանին:
4.Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ հանձնաժողովի գործունեությունն իրականացնելու համար:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ.նոյեմբերի 8
ք. Կապան